

մեկնութիւնն ու անոնց անօրեայ կեանքի մէջ գործադրութեան եղանակը:

Իբր երկու հազար բարբիներ աշխատակցած են թալմուտին, որով կարելի է երեւակայել թէ ինչ խառնիճադանճ հաւաքածոյ մըն է. յաճախ մեկնութիւններ իսկ մեկնաբանուած են տարբեր խմաստներով: Շատ մը արտառօցութիւններ կան, բխած մոլեռանդ միսթիքականութենէ մը, որոնց կէտ առ կէտ գործադրութիւնը կեանքի մէջ անհնար եւ պարզապէս ծիծաղելի է յաճախ:

Այսպէս, օրինակի համար, ան կը բացատրէ թէ շարք օրն ինչպէս պէտք է ոչխարներն արածելու տանիլ կամ զգեստներն հագնիլ առանց անաստելու Օրէնքին, որ կը պատուիրէ բանի մը ձեռք չզպչնել այդ օրը. թէ ի՞նչ հեռաւորութեամբ ներելի է քալել ոտքով կամ ի՞նչ միջոցաւ երկարել այդ ճամբորդութիւնը. թէ որչա՞փ կարելի է բարձրացնել ձայնն աղօթքի ժամանակ. թէ ի՞նչ պէտք է ընել եբր ճիշդ աղօթքի ժամանակ օձ մը փաթթուի սոքերուն եւ կամ կարիճի մը խոյթումը կը զգացուի մարմնոյ յետէ կողմը:

Ահագին յօդուածներ կան բացատրելու համար, թէ ներելի՞ է լու մը կամ ոջիլ մը ըստաննել շարք օրը եւ կամ թէ Օրէնքին համապատասխան է շարք օրն անուած հաւկիթ մը ուտել...:

Արդար ըլլալու համար պէտք է յիշել միեւնոյն ժամանակ, թէ հակառակ այս անհեթեթութեանց, որոնցմէ քիչ շատ ամէն կրօնքներու մէջ կան, թալմուտը ահագին յիշատակարան մըն է բարոյական խրատներու, հաւատքի, յոյսի, սնտոխապաշտութեանց, աւանդութեանց, կրօնական գիտելիքներու, օրէնդատագրութեանց եւ այլն. ան հրէաներու հազար տարուան պատմութիւնն է, անյարիր եւ խառնիչուուն խմբագրութեամբ: Թալմուտի պատուիրաններն են որ կը ճշդեն ու կը պայմանաւորեն հրէայի կեանքը՝ անոր ծնունդէն մինչեւ մահը, արեւածագէն մինչեւ մայրամուտը եւ այսպէս բարեպաշտի մը համար իւրաքանչիւր շարժում, գործ կամ խորհուրդ կրօնական արարողութիւն մը կը նկատուի:

Ինչպէս ըսինք, թալմուտը Աստուաշունչի մեկնաբանութիւնն է իսկապէս. բայց խմբա-

գրութեանց ժամանակներու հոգեբանութեան համաձայն հրէայ բարբին անոնց մէջ զբառ է տարբեր ոգի: Աստուածաշունչը նախնական, ռազմատենչ հոգուերդութիւն մըն է, թալմուտաշրջիկ կեանքի գիւցաղներդութիւն մը. մինչդեռ թալմուտը վերացական եւ բռնադրօսիկ զազափարներով տոգորուած վարժապետական օրինագիրք մը:

Աստուածաշունչը հրէայ ցեղի պատմութիւնն է եւ աւելի ուսուցման համար գրուած է, մինչդեռ թալմուտը հրէայ ցեղի առանձնաշատկութիւնները պահելու կանխամտածութեամբ խմբագրուած օրինագիրք մըն է, որ արդիւ է հրէան ձուլուելէ հեթանոսներու հետ, մինչեւ մեսիայի գալուտը:

Թօրան սրբապղծութենէ զերծ պահելու եւ թալմուտի պատուէրներուն համաձայն սպրիլ կարողանալու համար է որ դարեր շարունակ հրէաները կամովին առանձնացած են կեթթօներու մէջ: Ուր որ քառ ձ զիրենք բախտը, անմիջապէս հաւաքուած են քովէ քով՝ առանձին թաղ մը կազմելու՝ թօրայի զլանիկները պարունակող խրճիթին կամ շէնքին շուրջը: Այս միջոցով՝ ամէն օտար միջավայրի մէջ անոնք կազմած են հայրենիք մը, ճիշդ նման անդլիացիներուն, որ ամէն տեղ հօմ մը կը ստեղծեն Օքսֆորտի կամ Քէմպրիճի իրենց կեանքումն սպրելու համար ամենուրեք, հայրենի հողէն հեռու:

ՀԱԿԱՍԵՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Կեթթօներու շնորհիւ է մեծ մասամբ, որ հրէաները կարողացած են պահել իրենց ազգութիւնը, թէեւ երկու հազար տարիէն աւելի է որ պետական կեանքէ զրկուած եւ ցրուած են ի սիւն աշխարհի:

Բաւական դժուար է ազգ բառը ճշգրտօրէն սահմանել. ահաւասիկ հրէաներն, որ հայրենիք եւ պետութիւն չունին, կը խօսին ամէն լեզու բացի եբրայերէնէ, հպատակ կամ քաղաքացի են այն երկրին, ուր կ'ապրին եւ սակայն բառին բովանդակ նշանակութեամբ ազգ մըն են, որովհետեւ խորհելու, ապրելու, յուսալու եւ կամենալու միեւնոյն զգացումներն ունին եւ մտնաւանդ անցեալի միեւնոյն աւանդութիւններուն փարած են ջերմապէս եւ կ'ողբերուն անոնցմով: